



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 24 Օգոստոս, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 121

ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ՊԱՀԱՊԱՆԸ

Աչքերս դէպի լեռները կը բարձրացնեմ,
ուրկէ օգնութիւն պիտի գայ ինձի:
Օգնութիւնս Տիրոջմէն է որ պիտի գայ,
որ արարիչն է երկինքին ու երկրին:
Անիկա թոյլ պիտի չտայ
որ փորձանքի մէջ իյնաս,
որովհետեւ քու անքուն Պահապանդ է ան:
Արդարեւ, ան չի՛ ննջեր եւ չի՛ քնանար,
իր ժողովուրդին Պահապանն է ան:
Տէրը քու պահապանդ է,
քու հովանի պաշտպանդ է, կողքիդ կանգնած:
Ոչ ցերեկ ատեն արեգակը քեզի վնաս պիտի տայ,
ոչ ալ լուսինը՝ գիշեր ատեն:
Տէրը ինք քեզ պիտի պահէ ամէն չարիքէ,
եւ քեզ պիտի պահպանէ:
Տունէդ դուրս ըլլաս թէ ներս՝
Տէրը ինք քեզ պիտի պաշտպանէ,
այժմէն մինչեւ յաւիտեան:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն էս նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Զրիստոս,
այ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուր եւ ի գիշերի,
ի նստիլ ի փան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻՔԹԸ



ԵՐԵՄԻԱՅԻ ՈՂԲԸ

ԳԼՈՒԽ 4

ԵՐՈՒՄԱՂԷՄ՝ ԱՆԿՈՒՄԷՆ ՅԵՏՈՑ

Այս բաժնով մարգարեն կը ներկայացնէ Երուսաղէմի վիճակը, ուր էր եւ ուր հասաւ, ինչ վիճակէն ինչ վիճակի մաքրուեցաւ: Ժողովուրդ մը, ոսկիի նման, սակայն սկսաւ գոյն կորսնցնելու: Սրբարան մը, որ յարուկ շինուած էր իրենց Աստուծոյն, որ զիրենք ազապա՛ծ ու բերա՛ծ բնակեցուցած էր խոստացուած երկրի մը մէջ, ուր կաթ ու մեղր կը բոխի, ահա այդ Սրբարանին քարերը փոփոցները թափուած, ցոյց կու տայ այդ Սրբարանին կործանումը: Տակաւին կը ներակայացնէ սովի վիճակը, երկիր մը որ կաթ եւ մեղր կը բոխեցնէր, իսկ հիմա կաթընկերները սովամահ, փղաքը հաց կ'ուզէն հաց փուռող չկայ: Ազնիւ ուրելիք ու փողները, շքեղ հագուստի հագնողները աղբանոցներու մէջէն կը բնութեն իրենց ուրելիքը:

Պատճառ: Որովհետեւ ՚Իմ ժողովուրդիս աղջկան անօրէնութիւնը Սողոմի մեղքէն մեծ եղաւ՚ (6 հմբ): Տակաւին, ազնուականներ էին, ձիւնէն ատելի մաքուր, կաթէն ատելի ճերմակ, շափիւղայի նման թանկագին, բայց ահաւասիկ անուխէն ատելի սեւ եղան, այնչափ որ ալ չէին ճանչցնուէր: Իրենց անօրէնութեան պատճառով Տէրը Իր սրբամտութիւնը կապարեց, Իր սաստիկ բարկութիւնը թափեց 11 հմբ: Ի փես այս երեւոյթին երկրի թագաւորները ու աշխարհի բնակիչները չհաւաքացին եղածին, թէ ինչպէս կրնայ հակառակորդն ու թշնամին Երուսաղէմի դռներն ներս մտնէ, որովհետեւ գիտէին թէ Երուսաղէմը Աստուծոյ քաղաքն է՝ ու ուրեմն պաշտպանուած: Պատճառ, ՚Անոր մարգարէներուն մեղքերէն, անոր քահանաներուն անօրէնութիւններէն, որոնք արդարներու արիւն թափեցին:

Այս բոլորի դիմաց օգնութեան սպասումն ու ակնկալութիւնը ունէին, բայց ի գուր ով էր որ իրենց օգնութեան ձեռք երկարէր, հոգնեցան սպասելէն, եւ ալ մօտեցած է վախճանը: Այս բոլորէն յետոյ յոյսի նշոյլ մը ահաւասիկ երբ կ'ըսէ. ՚Քու անօրէնութիւնդ վերջացաւ, ով Սիոնի աղջիկ, ալ քեզ գերի պիտի չքշեն՚ 22 հմբ: Իրենք յաճախ կ'ըսէին. ՚Ազգերու մէջ անոր հովանիին փակ պիտի ապրինք՚ 20 հմբ: Այս պարագային Աստուծոյ հովանիին փակ, այս պարագային Տիրոջ օձեակին, այսինքն՝ Մեսիային հովանիին փակ: Այսօր նոյն իրավիճակի մէջէն կ'անցնի մարդ արարածը, նեղութիւն, դժուարութիւն, հալածանք, անբուժելի հիւանդութիւն, սով, համաճառակ, մահ, սպաննութիւն, եւ ակնկալութիւնն ու սպասումը ունինք օգնութեան, մէկը գալու եւ օգնութեան ձեռք երկարելու, բայց մեր հայեացքը որ ուղղութեան ենք սեւեռած հորիզոնական կամ ուղղահայեաց: Այսինքն՝ մեր օգնութիւնը կը սպասենք մարդէ մը, ազգէ մը, պետութենէ մը, եւ կամ՝ Մաղսնուերգուի բառերով, մեր աչքերը երկինք բարձրացուցած ուրկէ մեր օգնութիւնը պիտի գայ, որովհետեւ մեր օգնութիւնը երկինքէն՝ Տիրոջմէն է որ պիտի գայ, որ արարիչն է երկինքին ու երկրին: Տաօք սրբի, յաճախ ծիծաղի առարկայ ու նիւթ է այսպիսի արտայայտութիւն, երբ մարդիկ կը սկսին ըսել, ուր է ձեր Տէր Աստուածը ինչո՞ւ օգնութեան չի գար: Կը պարասխանենք ըսելով, Դաւիթ մարգարէի իսկ բառերով. «Համբերութեամբ սպասեցի Տիրոջ եւ Ան եկաւ ինիծի օգնութեան»: Համբերութեամբ սպասենք եւ վստահինք, որ Ան պիտի գայ օգնութեան: